ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Ի.ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

XII դ. երկրորդ կեսից-XIVդ. կեսերն ընկած ժամանակահատվածում Հյուսիսային Հայաստանի և վրացական թագավորության պատմության մեջ ակնառու դեր ունեցած Զաքարյան իշխանական տոհմի ծագումնաբանության հարցը վաղուց ի վեր հետազոտողների ուշադրության կենտրոնում գտնվելով հանդերձ, այսօր էլ տարակարծությունների առարկա է: Դրա պատճառը ոչ միայն աղբյուրների աղքատությունը, հաղորդումների անհստակությունն ու իրարամերժությունն է, այլև աղբյուրագիտական նյութի մերթ բառացի, մերթ արդիական ընկալումը, ինչը հաճախ ուղեկցվում է աչառու քննությամբ, երբ ոչ թե եզրահանգումն է բխեցվում քննությունից, այլ՝ ընդհակառակը: Բացի այդ, Զաքարյանների ծագման մասին մեզ հասած վկայություններն արտացոլելով իրենց ստեղծման պահից շատ առաջ եղած իրողությունները, օրինաչափորեն կրում են և ժամանակի փոշին, և տվյալ պահին գերիշխող ու, իբրև կանոն, հիմքում քաղաքական ենթատեքստ ունեցող պատմական մտածողության կնիքը: Ուստի և օբյեկտիվ իրականությունը խեղաթյուրվում էր՝ ծառայեցվելով սուբյեկտիվ գործոնին: Բնականաբար, այս ամենը մեծապես դժվարացնում է պատմական իրականության վերհանումը:

Գիտական շրջանառության մեջ եղած աղբյուրները Զաքարյան տոհմի ծագման երկու հիմնական տարբերակ են առաջարկում: Դրանցից մեկի համաձայն Զաքարյաններն ունեն հայկական արմատներ, սերում են Արծրունյաց կամ Բագրատունյաց տոհմերից, իսկ ըստ մյուսի՝ օտար ծագում (քրդական ու պարսկական) և սերում են համապատասխանաբար քրդական Բաբիրական (=Բաբիլական) խելից, Ք.ա. Vդ. ապրած Արտաքսերքսես I Աքեմենյանից, Հազկերտ Սասանյանից: Եթե Զաքարյաններին հայկական արմատներ վերագրող աղբյուրներից երկուսը հնագույնն են ու վիմագիր և հեղինակված են այդ տոհմի առավել նշանավոր ներկայացուցիչներ Զաքարե Ա ամիրսպասալարի ու նրա եղբայր Իվանե աթաբեկի կողմից, ապա նրանց օտար ծագումը պնդող բոլոր աղբյուրներն էլ գրչագիր են, ավելի ուշ շրջանի և պատկանում են XIIIդ. հայ և XIII, XVIIIդդ. վրաց հեղինակների գրչին:

Զաքարյաններին Արծրունի համարող աղբյուրը 1195թ. Անբերդն ազատագրելուց հետո այնտեղ Զաքարեի ու Իվանեի թողած և, թերևս, մեզ վնասված վիճակով հասած «Ամիրսպասալար Զաքարիա Իվանա Արծրունի» արաբատառ արձանագրությունն է: Չնայած անթվակիր լինելուն, ելնելով դրանում Անիի ազատագրման (1199) նշման բացակայությունից՝ այն թվագրելի է 1195/1198-ով: Զաքարյաններին Բագրատունի հռչակող միակ վկայությունը հաղարծնում Իվանեի թողած արձանագրությունն է, որում ի

Ա. Ն. Տեր-Ղևոնդյան, Զաքարիայի ու Իվանեի արաբատառ արձանագրությունը Անբերդում (Պատմա-բանասիրական հանդես, 1971, N 1, էջ 86). Հմմտ. А. А. Хачатрян, Корпус арабских над писей Армении. VII-XVI вв., вып. I, Е., 1987, с. 47.

մի են բերվել Զաքարյանների ադատամարտերի հիմնական փուլի արդյունքները. «...Այս դիր մեր յիշատակի է եւ արձան մշտընջենաւոր որդեաց Մեծին Սարգսի, յաղգէ Բագրատունեան՝ Իւանէի եւ Զաքարէի, յորժամ նախախնամութի՛ւնն՝ Ա՛ստուծո՛յ էհաս յարարածս եւ եւ ...տիրել սէփական ժառանգութե անն նախնեաց մերոց, եւ ի ձեռս մեր յառաջ զանառիկ դղեակն Անբերդ...» : Այս արձանագրությունը ևս թվական չունի, սակայն Զաքարեի մահից (1212) հետո գրված լինելը, դրանում այլ նվաճումների չնչվելը, և որ շատ կարևոր է՝ ի տարբերություն Աղջոց սուրբ Ստեփաննոս եկեղեցու 1212թ. արձանագրության՝ Իվանեի՝ աթաբեկ տիտղոսով հանդես չգալը հուշում են այն թվագրել 1212-ով: Ըստ երևույթին, Իվանեն այս արձանագրությունը թողել է եղբոր մահից անմիջապես հետո՝ նույն տարում, նախքան աթաբեկ տիտղոսին արժանանալը: Որոշ հետազոտողներ՝ Բագրատունիներից Զաքարյանների սերված լինելը ցուցող վկայություն են դիտել նաև Մեծ Սարգիս Զաքարյանի դուստր Վանենիի (Նանա)՝ Զաքարեի ու Իվանեի քրոջ, թողած արձանագրություններից մեկը: Այն արվել է ի հիշատակ 1192թ. իր անժամանակ մահացած կողակից Կյուրիկյան Աբաս II թագավորի՝ Վանենու կառուցած Սանահնի կամրջի խաչքարի վրա: Սկզբնամասում մնասված այս արձանագրությունը մեզ է հասել հետևյալ տեսքով. «...(ա)զդին բագրատունեաց: Ես՝ Վանենի, դուստր իշխանաց իշխան Սարգսի, որդո Զաքարէի, կին Աբասա թագաւորի... շինեցի զկամուրջս եւ կանգնեցի զխաչս յիշատակ նմա եւ մխիթար ինձ եւ ի կեանս ծնողաց եւ եղբարց իմոց...» : Արձանագրության «...(ա)զդին բագրատունեաց» բառերը նման պնդման հիմք չեն տալիս , առավել ևս, որ նույն այդ Վանենին Սորո Զորո վանքում 1197թ. թողած արձանագրության մեջ հանդես է գալիս սոսկ անձնանունով. «ես՝ Նանա» , նույն կերպ վարվելով XIIIդ. սկզբներին Հովհաննավանքի գերեզմանոցում կանգնեցրած խաչքարի վիմագրի մեջ, հավելելով միայն հայրանունը. «...ես՝ Նանայս, դուստր մեծ Ռապետին (հազարապետին - Ա.Շ.) Սարգսի»: Զաքարյանների հայկական ծագումը հավաստող և նրանց տոհմածառի ակունքների մասին հաղորդող

---

[2] Դիվան հայ վիմագրության, պրակ VI, կազմեցին Ս. Ա. Ա վ ա գ յ ա ն, Հռ. Մ. Զ ա ն փ ո լ ա դ յ ա ն, Ե., 1977, էջ 22:

[3] Ս. Տ. Ս ա ղ ո ւ մ յ ա ն, Պատմական մի հուշարձանի կառուցման հարցի շուրջ (Պատմա-բանասիրական հանդես, 1986, N 2, էջ 197):

[4] M. B r o s s e t, Additions et e'claireissements a L'histore de la Georgie, SPb., 1851, p. 270. Ա ս լ ա ն Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Զաքարյան (Երկայնաբազուկ) տոհմի ծագումը, գաղթը դեպի Զորագետ և նախորդները (Շողակաթ, Էջմիածին, 1913, էջ 70), Կ. Տ ե ր - Մ կ ր տ չ յ ա ն, Նյութեր հայ մելիքության մասին, պրակ Բ, Դոփյանք և Մելիք Շահնազարյանք, Էջմիածին, 1914, էջ 23: Լ. Մ ե լ ի ք ս ե թ - Բ ե կ, Հայերը վրաց հին գրականության մեջ (Դեղարվեստ, 1921, էջ 50), Շ. Ա. Մ ե ս խ ի ա, Ներքաղաքական վիճակը և պետական կառուցվածքը XII դարի Վրաստանում, Թբիլիսի, 1979, էջ 223-224 (վրացերեն):

Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Ե., 1957, էջ 185:

Հմմտ. Լ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագումը (Պատմա-բանասիրական հանդես, 1994, N 1-2, էջ 156, ծան. 2):

Դիվան հայ վիմագրության, պրակ VI, էջ 135:

Կ ա ր ո Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Ե., 1948, էջ 113: Ի դեպ, Վանենին մեծ Սարգսին վերագրել է մի տիտղոս, որը նա չի ունեցել

աղբյուրներից երրորդը Ստեփանոս Օրբելյանի 1297թ. հեղինակած աշխատությունն է[9]: Նրանում պատմիչը նշել է. «Թամարն մեծարեալ զորդիսն Սարգսի՝ որդւոյ Զաքարէի իշխանի, հայ ազգաւ և ուղղափառ հաւատով, զԶաքարէ և զԻւանէ, և բարձրացուցանէ ի փառս և ի պատիւ»[10]:

Զաքարյաններին քրդական ծագում վերագրող մեզ հասած հնագույն աղբյուրները պատկանում են Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի գրչին ու ստեղծվել են 1250-1260-ական թվականներին: Զաքարեի ու Իվանեի հերոսապատումներին Կիրակոս Գանձակեցին նվիրել է հատուկ գլուխ, որի սկզբնամասում անդրադարձել է Զաքարյանների տոհմածառին ու ծագմանը. «...Էին յԱրևելեաս երկու եղբարք, որդիք Սարգսի բարեպաշտ իշխանի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարիայ, որ հատուածեալ ի քրդաց, ի Բաբիրական խելէն, անուն առաջնոյն Զաքարէ, և երկրորդին՝ Իւանէ»[11]: Նույն կերպ է վարվել նաև Վարդան վարդապետն ու գրել հետևյալը. «Ցաւուրս ժամանակացս այսոցիկ էին փառաւոր իշխանքն Զաքարէ և Իւանէ որդիք Սարգսի, որդւոյ Վարհամայ, որդւոյ Զաքարի յորդւոյ Սարգսի, ի Քուրդ ազգէ»[12]: Ապա Կիրակոս Գանձակեցուն հավելելով՝ շարունակել է. «Հատուած եղեալ առ թագաւորսն Զորոգետոյ, որ ի Բագրատունեաց ազգէ, հաւատացին ի Քրիստոս և պատուեցան եւ տուաւ նոցա տուն բնակութեան Խոշորնի»[13]:

Զաքարյանների պարսկական սերումը պնդող հնագույն աղբյուրը Թամար թագուհու առաջին պատմիչի երկն է: Դրանում անդրադառնալով Զաքարե ամիրսպասալարի մահվանը, վրաց պատմիչը գրում է. «Մահացավ Զաքարե ամիրսպասալարը, նույնպես ամիրսպասալար Սարգսի որդին. մեծափառ և բոլոր առաքինություններով լի մարդ էր, հաղթող, քաջ և զորեղ մարտիկ ... Դա տոհմից էլ էր՝ նա Արտաքսերքսես Մխարգրձելիի ազգականն էր և հավատով հայ էր»[14]: XVIIդ. մի այլ վրաց հեղինակ՝ Իոաննե Բագրատիոնին ևս, Զաքարյաններին պարսկական ծագում վերագրելով, նշում է, որ նրանք պարսից Հազկերտ (պարզ է՝ Սասանյան) արքայի տոհմից են սերել: Նրանք, Պարսկաստանից արտաքսվելով, գնացել են Ասորեստան,

---

[9] Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Ա բ ր ա հ ա մ յ ա ն ի, Ե., 1986, էջ 58:

[10] Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 391: Ստեփանոս Օրբելյանի «հայ ազգաւ և ուղղափառ հաւատով» խոսքերը Մեծ Սարգսի հայր Զաքարեին վերաբերելը հստակ է ոչ միայն շարադրանքի շարահյուսությունից, այլև այն բանից, որ քաղկեդոնականությանը հարած Իվանեին Ստեփաննոս Օրբելյանը երբեք ուղղափառ հավատի տեր, այսինքն, լուսավորչադավան չէր կոչի: Սյունյաց պատմիչի աշխատության աշխարհաբար հրատարակության թարգմանիչը ևս քննվող հատվածը նույն կերպ է ընկալել. «Թամարը... մեծ պատվի արժանացրեց հայ քրիստոնյա Զաքարե իշխանի որդի Սարգսի որդիներին՝ Զաքարեին ու Իվանեին»(Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, Սյունիքի պատմություն, էջ 316):

[11] Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մ ե լ ի ք - Օ հ ա ն ջ ա ն յ ա ն ի, Ե., 1961, էջ 162:

[12] Հաւաքումն պատմութեան Վ ա ր դ ա ն ա յ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 138:

[13] Նույն տեղում:

[14] Քարթլիս ցխովրեբա, հ. 2, Թբիլիսի, 1959, էջ 109-110 (վրացերեն):

որտեղ նրանց նախնին ընդունել է հայոց հավատը, ապա տեղափոխվել են Երևան, այսինքն՝ Հայաստան՝՝:

Վերը ոչ պատահաբար ամբողջովին բերված աղբյուրներին կամ դրանց մեծ մասին քաջածանոթ հետազոտողները սակավ բացառությամբ ընդունել են Զաքարյանների գաղթած լինելը և քրդական արմատ ունենալը: Դրանք են՝ Մ.Զամչյանը, Մ.Բրոսեն, Ալ.Երիցյանը, Ե.Լալայանը, Ս.Կակաբաձեն, Վ.Ալենը, Ի.Ջավախիշվիլին, Հ.Աճառյանը, Հ.Մանանդյանը, Վ.Մինորսկին, Ա.Հովհաննիսյանը, Շ.Մեսխիան, Հ.Օրբելին (վերապահությամբ) և ուրիշներ:[16] Զաքարյաններին քաղդեական ծագում է վերագրել Աս.Շահնազարյանը, իսկ վրացական սերում՝ Ի.Ցինցաձեն և Ա.Իաքրաձեն՝՝:

Զաքարյանների ծննդաբանությամբ զբաղված որոշ հետազոտողներ էլ, նրանց գաղթն ընդունելով հանդերձ, պնդել են այդ տոհմի հայկական ծագումը: Նրանցից Ղ.Ալիշանը Զաքարյաններին համարել է «մարահայեր», Կ.Տեր-Մկրտչյանը նրանց սերված է համարել Բագրատունիներից Մ.Օրմանյանը՝ Օրբելյաններից, Կ.Թումանովը՝ Պահլավունիներից, իսկ Ս.Երեմյանը՝ Արծրունիներից՝՝: Ժամանակին տողերիս հեղինակը ևս հպանցիկ մերժել է Զաքարյանների քրդական ծագման վարկածը՝՝: Հիմնախնդրին վերջինն անդրադարձած Հ.Մարդարյանը, մերժելով Զաքարյանների ինչպես գաղթի, այնպես էլ բագրատունիական, արծրունիական, քրդական և պարսկական ծագման վարկածները, եզրակացրել է, որ Զաքարյանները XIIդ.

---

[15] Կ.Կեկելիձեի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, Ֆ. S, ձեռ. N 37-29, թ. 10v:

[16] Միքայել Զամչյան, Պատմություն Հայոց, հ.Գ, Վենետիկ, 1786, էջ 149, M. Brosset, նշվ. աշխ., էջ 270, А. Ерицов, Монастырь Ахпата (Кавказская старина, 1871, N1, с. 20,) Ե. Լալայան, Բորչալուի գավառ (Ազգագրական հանդես, VII և VIII գրքեր 1901, էջ 319), Ս. Կակաբաձե, Թամար թագուհին և նրա նշանակությունը վրաց պատմության մեջ, Թբիլիսի, 1912, էջ 10 (վրացերեն), Նույնի՝ Թորելիների տոհմի մասին, Թբիլիսի, 1914, էջ 61 (վրացերեն), Նույնի՝ Շոթա Ռուսթավելին և նրա «Ընձենավորը», Թբիլիսի, 1966, էջ 91 (վրացերեն), W. E. D. Allen, A Histoty of the Georgian People, London, 1932, p. 104, Ի. Ջավախիշվիլի, Վրաց ժողովրդի պատմություն, հ.2, Թբիլիսի, 1948, էջ 254 (վրացերեն), Հ. Աճառյան, Հայ անձնանունների բառարան, հ.IV, Ե., 1948, էջ 411, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ.Գ, Ե., 1952, էջ 123, V. Minorsky, Studies in Caucasian History, London, 1953, p. 101, Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Ե., 1957, էջ 152-154, Շ. Ա. Մեսխիա, նշվ. աշխ., էջ 222-224 և այլն, И. А. Орбели, Избранные труды, Е., 1963, с. 9 և ուրիշներ:

Աս ալան Շահնազարյան, նշվ.աշխ., էջ 73-74, Ի. Ցինցաձե, Գրպտումներ Ռուսաստանի և Վրաստանի փոխհարաբերությունների պատմությունից, Թբիլիսի, 1956, էջ 158-159 (վրացերեն), Ա. Բաքրաձե, Այսպես է վկայում պատմիչը (Մնաթռքի, 1970, N 4, էջ 188, վրացերեն):

[18] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 321, Կ. Տեր-Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 19-28, Մաղաքիա Օրմանյան, Ազգապատում, հ.Ա, Բեյրութ, 1959, էջ 1486, C. Toumanoff, Studies in Christian Caucasian History, Rome, 1963, p. 207, Ս. Երեմյան, Զաքարյաններ (Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 3, Ե., 1987, էջ 676):

[19] Ա. Ի. Շահնազարյան, Զաքարյանների տոհմածառի հարցի շուրջ (Պատմա-բանասիրական հանդես, 1985, N 3, էջ 209):

պատմական ասպարեզ դուրս գալու ժամանակ ունեին չեչտված հայկական դիմագիծ[20]:

Այժմ անդրադառնանք աղբյուրների հաղորդումներին և հարցի չուրջ եղած կարծիքների հաշվառմամբ փորձենք ճշտել Զաքարյանների ծագումը: Ինչպես տեսանք, Անբերդի արաբատառ արձանագրության մեջ Զաքարեն ու Իվանեն իրենց Արծրունյաց ծագում են վերագրել: Ըստ Ա.Տեր-Ղևոնդյանի, նման պնդման հիմք կարող էր ծառայել Զաքարեի ու Իվանեի մայրական գծով Արծրունի լինելը[21], քանի որ նրանց մայր Սահակդուխտը Մահկանաբերդի տեր Ամիր-Քրդի քույրն էր: Հ.Մարգարյանը մահկանաբերդցիների Արծրունի լինելը վիճարկել է՝ գտնելով, որ այդ վարկածն ի հայտ է եկել XIIIդ. երկրորդ կեսին՝ այդ տոհմի նշանավոր ներկայացուցիչ Սադուն աթաբեկի «գործունեության հետևանքով»[22]: Այս պնդումն ընդունելի է, քանի որ մահկանաբերդցիները, 1120-ական թվականներից սկսած, երբ Դավիթ IV Շինարարը նրանց չնորհեց Մահկանաբերդը, հայտնի տոհմ դառնալով և աղբյուրներում բազմիցս վկայվելով հանդերձ, որևէ տոհմանունով երբեք չեն հիշատակվել: Սահակդուխտը միայն անունով՝ Սանդուխտ, իսկ նրա ամուսին Մեծ Սարգիսը նաև ամիրսպասալար տիտղոսով, առանց տոհմանվան են հիշատակված Հոռոմայրում 1187թ. իրենց որդիներ Զաքարեի ու Իվանեի թողած արձանագրության մեջ[23]: Անիի Զաքարե եկեղեցու արձանագրության մեջ ևս Սահակդուխտը ներկայացված է միայն անունով, այն էլ իբրև «Թագաւորաց Հաոց»՝ Զաքարեի ու Իվանեի ծնող.[24] Արձանագրության մեջ նրա որդիների չունեցած տիտղոսի հիշատակումը վկայում է, որ Սահակդուխտի տոհմիկ (տվյալ դեպքում Արծրունի) ծագում ունենալու դեպքում դա անպայման կնշվեր: Ավելորդ չէ հիշել, որ Արծրունիներից ցածր գտնվող իշխանական տների շառավիղներն այդ շրջանում թողած վկայություններում սովորաբար նշում էին իրենց

---

[20] Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ (Նույն տեղում, 1992,N 2-3, էջ 139-152), Ն ու յ ն ի՝ Զաքարյանների ծագումը (Նույն տեղում,1994, N1-2, էջ 156-175):

[21] Նույն տեղում, 1971, N1, էջ 187:

[22] Նույն տեղում, 1994, N 1-2, էջ 162, Հ ա յ ր ա պ ե տ Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Մահկանաբերդցիների (Սադունյանների) իշխանական տունը ԺԲ-ԺԳ դարերում (Հայկազյան հայագիտական հանդես, Հ.ԺԸ, Բեյրութ, 1998, էջ 10-14):

[23] Արձանագրությունը մեզ է տրամադրել վիմագրագետ Ս.Սաղումյանը, որի համար չնորհակալ ենք: Այն առաջին անգամ Սանդուխտ անունը բաց թողնելով և որոշ տարընթերցումներով, հրատարակել է Ս.Ջալալյանցը (Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփիւիս, 1842, էջ 98), որից էական կրճատումներով քաղել է Կ.Կոստանյանցը (Վիմական տարեգիր, Ս.-Պետերբուրգ, 1913, էջ 98); Ահա արձանագրությունն ամբողջությամբ. «Ի թուի ՈԼԶ (1187) յանուն Ա՛ստուծո՝յ ես՝ ամիրապասալար Զաքարէ և Իվանէ, չինեցաք զեկեղեցիս, տուաք զՇենուկն ս՝ուրբ Նշանիս վասն մեր յերկար կենդանութեան եւ մեր ծնողացն հոգոյն առնէն ժամ: Բ: աւր զատկին ամիրսպասալար Սարգսի,: Բ: աւր Սանդխտոյ: Ով զգեղն առնու կամ զժամն խափանէն՝ նզոված է յԱ՛ստուծո՝յ: Ամէն»: Այս արձանագրությունն արժեքավոր է նաև նրանով, որ Սահակդուխտին հիշատակող հնագույն վիմագիրն է և հայտնում է 1187թ. նրա վախճանված լինելը: Դա բացառում է Անիում նրա հուղարկավորված լինելը:

[24] Դիվան հայ վիմագրության, պրակ I, կազմեց Հ. Ա. Օ ր բ ե լ ի, Ե., 1956, էջ 57: Հմմտ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մ ա թ և ո ս յ ա ն, Ե., 1984, էջ 178՝ «Որ էր եղբայր մաւր (Սահակդուխտի - Ա.Շ.) կեսառոսաց Հայոց եւ Վրաց եւ ամենայն Ափխազաց... մեծածին Զաքարիայի և Իվանեի»:

տոհմական պատկանելությունը[25]: Հետևաբար, իրենց Արծրունի հուչակելով՝ Զաքարեն ու Իվանեն ակնհայտորեն քաղաքական նպատակներ են ունեցել, որոնք միայն մեծատոհմիկություն շահելով չեն սահմանափակվել: Դա վկայում է նաև Անբերդի վիմագրի արաբատառ լինելը: Սահմեցական աշխարհի գործածական գրով իրենց Արծրունի հայտարարելով՝ նրանք Շահ-Արմեններին ներկայանում էին իբրև Արծրունիների ժառանգորդ-իրավահաջորդներ՝ իրավական առումով հիմնավորելով վերջիններիս նախկին տիրույթների նկատմամբ հավակնությունների օրինաչափությունը: Զաքարյանների արծրունիական ծագումը ստույգ լինելու դեպքում այդ իրողությունը կարտացոլվեր 1200թ. Հովհաննավանքում և 1210թ. Հաղբատում Զաքարեի թողած վիմագրերում, որոնցում նշվում է Անբերդի ազատագրումը[26]: Ուստի, երբ 1207թ. Խլաթի անհաջող պաշարումից հետո Շահ-Արմենների հողերին տիրացած Այուբյանների դեմ պայքարի անհեռանկարայնությունը Զաքարյաններին ստիպեց հրաժարվել Արծրունիների նախկին տիրույթներում խորանալու մտքից, նրանք շրջանառության մեջ դրեցին բագրատունիական ծագման վարկածը[27], որը սկսել էր արծարծվել 1195թ. սկսած՝ Բագրատունիների շահնշահ պատվանման օգտագործմամբ[28]: Ինչպես կարելի է մակաբերել Թամար թագուհու առաջին պատմիչի խոսքերից, դրան իրավական հիմք էր ծառայեցվել 1191թ. սկսած Զաքարեի՝ «Լոռիին տիրող, հայոց թագավորի աթոռակալ» դիտվելը[29]: Հայոց թագավոր ասելով՝ վրաց պատմիչը նկատի է ունեցել Անիի Բագրատունիներից սերված և Լոռուն տիրած Կյուրիկյաններին: Իրենց Բագրատունյաց արմատներ վերագրելու ուղղությամբ Զաքարյան եղբայրների հերթական՝ ավելի որոշակի, քայլը Հաղբատում 1210թ. Զաքարեի թողած մի քանի առումով ուշագրավ արձանագրությունն է: Բնութագրական է, որ դրա վերջնամասում միայն տիտղոսաշարով և ժառանգորդական առումով հանդես եկած Զաքարիան («...ես մանդատորթուխուցէս, ամիրսպասալար շահնշահ Զաքարիա, որդի բարէպաշտ իշխանաց իշխան Սարգսի») դրանից առաջ երկիցս ակնարկում է իր և եղբոր բագրատունիական ծագումը («ետ Ա՛ստուա՛ծ ի ձեռն Բ հարազատացս՝ Զաքարէի եւ Իւանէի զսեփական դդեակն մեր զԱնբերդ, զշինեալն ի նախնեաց մեր՛ոյց՝ եւ այլ բազում ամրոցս»)[30]: Այսպիսով, հորը միայն իշխանաց իշխան տիտղոսով ներկայացնելով՝

---

[25] Տես օրինակ, Կ ա ր ո Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Հաղբատ, Ե., 1963, էջ 220, Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Գ. Բ ա ր խ ու դ ա ր յ ա ն, Ե., 1967, էջ 55, 56, 110, 208, 211, Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 109, 114, 121, 128, 130, 174, Ն ու յ ն ի՝ Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 90, 98, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 140, 182 և այլն:

[26] Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 76, Ն ու յ ն ի՝ Հաղբատ, էջ 169:

[27] Հմմտ. Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագումը, էջ 162-163:

[28] Ա. Ն. Շ ա հ ի ն յ ա ն, Կոշի կոթողը և նրա արձանագրությունը (Պատմաբանասիրական հանդես, 1968, N 2, էջ 201):

[29] Քարթլիս ցխովրեբա, հ. 2, էջ 55 (վրացերեն):

[30] Կ ա ր ո Ղ ա ֆ ա գ ա ր յ ա ն, Հաղբատ, էջ 168-169: Ցարդ հայագիտության ու վրացագիտության մեջ չկատարված կռահումների տեղիք է տալիս այս արձանագրության «յամս աւծելոյ Ա՛ստուծո՛յ թ.ւաւգաւորաց թագաւորին Գէորգէ, որդոյ մեծ թ.ւաւգաւորին Թ.ամարին», հատվածը, որից հետևում է, որ 1207թ. մոր մահից հետո գահ բարձրացած և, բնականաբար, թագադրված Գեորգի Լաշան 1210թ. կրկին թագադրվել է:

Զաքարեն հանդես է գալիս ոչ միայն շահնշահ տիտղոսով, այլև իրեն ու եղբորը հայտարարում է Անբերդը կառուցողների[31], այսինքն, Բագրատունիների ժառանգ և, իբրև այդպիսին, պնդում, որ Աստված հետ է տվել իրենց սեփականը: Հետևաբար, այս արձանագրությամբ Զաքարեն իրենց նվաճումներն օրինականացնելուց զատ ակնարկում է Բագրատունիների հետ տոհմական կապը: Մինչդեռ, նույն Զաքարեն դրանից տասը տարի առաջ՝ 1200թ., իր և եղբոր անունից թողած նույնատիպ մի արձանագրության մեջ բավարարվել է «ազատեցաւ երկիրս Արա[յ]ռատու»[32] ձևակերպմամբ: Զաքարյաններին Բագրատունիների հետ կապելու հաջորդ՝ արդեն բացահայտ քայլը կատարեց Իվանեն՝ եղբոր մահից քիչ անց Հաղարծնի վիմագրում իրեն ու Զաքարեին հռչակելով «յազգէ Բագրատունեան»: Սա Զաքարյանների կողմից իրենց ուղղակի Բագրատունի հռչակող միակ հայտնի վկայությունն է: Մինչդեռ, բազմաթիվ են Զաքարյանների հարազատների ու ենթակաների կողմից նրանց արքայական, այսինքն՝ Բագրատունյաց ծագում վերագրելու օրինակները: Դա հատկապես դրսևորվել է հօգուտ Զաքարյանների՝ Բագրատունիների տիտղոսաշարի չոայլ օգտագործմամբ[33]: Բայց անառարկելի է նաև այն, որ Լոռին 1185թ. ամիրսպասալարության դիմաց պայմանական հողատիրության իրավունքով ստացած Մեծ Սարգիսը երբևէ շահնշահ չի հորջորջվել[34]: Նույնիսկ որդիների կողմից Սանահնում իր գերեզմանի գեղեցիկ խաչքարի վրայի արձանագրություններում նա հիշատակվում է միայն «ամիրսպասալար հաց (եւ) վրաց» տիտղոսով և «Մեծն Սարգիս, որդի Զաքարէի, թոռն աւագ Սարգսի» ժառանգորդությամբ[35]: Եթե Մեծ Սարգիսը Բագրատունիներին ազգակից լիներ, ապա դրա փաստագրման ամենապատշաճ տեղը նրա գերեզմանի խաչքարն էր, առավել ևս, որ Զաքարյանները Բագրատունի-Կյուրիկյանների իրավաժառանգորդը դիտվելու միտումով էին Կյուրիկյանների հանգստարան ծառայող Սանահնում հիմնել իրենց տապանատունը[36]: Հատկանշական է, որ Հաղարծնի արձանագրությանը ժամանակակից՝ 1213թ., Մորո Զորո վանքում թողած վիմագրում աթաբեկ տիտղոսով ներկայացած Իվանեն չի փաստել ոչ իր Բագրատունյաց ծագումը, ոչ էլ

---

[31] Անբերդի կառուցման մասին տես Ս. Վ. Հարությունյան, Անբերդ, Ե., 1978, էջ 13-21:

[32] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 76:

[33] Տես Ա. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գիրք առաջին, էջ 155-160, հմմտ. Հ. Գ. Մարգարյան, Զաքարյանների ծագումը, էջ 157-161:

[34] Շ.Մեսխիան, Անիի 1215 թվակիր մի արձանագրության աղավաղված ընթերցումը (Վիմական տարեգիր, էջ 57) հիմք ընդունելով, Մեծ Սարգսին շահնշահ տիտղոս է վերագրել (Շ. Ա. Մեսխիա, նշվ. աշխ., էջ 285): Իրականում այդ վիմագրում կարդում ենք «...ի տերութեան մանտատորթախուցէս ամիրսպասալար շահնշահ Սարգսի ես Մխիթարիչս...» (Դիվան հայ վիմագրության, պրակ I, էջ 2): Այսինքն, խոսքը վերաբերում է նրա թոռ Սարգսին՝ Զաքարեի որդուն:

[35] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, էջ 178, 179: Մեծ Սարգիսը լոկ անվամբ է հիշատակված նաև Զաքարյանների տոհմական տապանատան մուտքի արձանագրության մեջ (նույն տեղում, էջ 178):

[36] Սանահինն այդպես էլ չդարձավ Զաքարյանների ավագ ճյուղի տոհմական հանգստարանը: Այնտեղ հուղարկավորվել են միայն Մեծ Սարգիսը, նրա որդի Զաքարեն և դուստր Նրջիսը: Տոհմի քաղկեդոնական դարձած անդամներ Իվանեն ու նրա որդի Ավագը թաղված են Գնձաքանքում, իսկ Զաքարեի որդի Շահնշահը՝ Քոբայրում:

նախնիների ժառանգությանը տիրանալը, բավարարվելով «առաք զերկիրս հայոց ի յանաւրէնաց»[37] հիշատակությամբ:

Ասվածը թույլ է տալիս պնդելու, որ իրենց Արծրունի և ապա Բագրատունի ծագում վերագրելու Զաքարյանների փորձերը նախ և առաջ քաղաքական գործոններով էին պայմանավորված: Պատմական ասպարեզ համեմատաբար նոր դուրս եկած և օրինական ու անօրինական բոլոր հնարավոր միջոցներով (զորավարական տաղանդի օգտագործում, հին ու նոր իշխանական տների հետ խնամիացում, փոխօգնություն, ֆեոդալական էթիկայի նորմերի շահախնդիր խախտում, սյուզերենի հետ սերտ կապերի հաստատում, նպատակադիր դավանափոխություն և այլն) հզորանալու ձգտող այդ տոհմին իրադարձությունների արագ փոփոխման պայմաններում շարունակ անհրաժեշտ էր իր դիրքերի ամրապնդման բոլոր երաշխիքների ապահովում՝ ունեցածը պահպանելու և ավելին հասնելու նպատակով: Եվ քանի որ իրավահաջորդությունը ֆեոդալական իրավունքի անբաժան բաղադրամասն էր, իսկ մեծատոհմիկությունը՝ կարևոր պայմանը, Զաքարյանները կամ նախօրոք, կամ իրավիճակին համարժեք արտաքուստ անտրամաբանական քայլեր էին կատարում՝ նախանձելի հեշտությամբ ու արագությամբ իրենց կապելով Բագրատունյաց Հայաստանի երկու հզոր տոհմերի՝ նախ Արծրունիների, ապա Բագրատունիների հետ: Այս իրողությունը լավ էին հասկանում վրաց Բագրատունիները, որոնք, իրոք, սերված լինելով հայ Բագրատուններից, վերջիններիս իրավահաջորդը դիտում էին իրենց և Զաքարյաններին «ազգական չէին համարում հայ Բագրատունիների հանգած տան»[38]: Դրա ապացույցն է Զաքարյանների պարսկական ծագման մասին այդ ընթացքում վրաց իրականության մեջ ստեղծված տեսությունը, որին իր տեղում կանդրադառնանք:

Ասվածի հաշվառմամբ դիտարկենք Զաքարյանների բագրատունիական և արծրունիական ծագման մասին հայտնված տեսակետները: Կ.Տեր-Մկրտչյանը, համոզիչ փաստարկներով ժերժելով Զաքարյանների քաղդեական ծագման մասին Աս.Շահնազարյանի պնդումը[39], վիճարկել է նաև նրանց քրդական արմատներ վերագրող աղբյուրների տվյալները՝ անհասկանալի համարելով մահմեդական քուրդ իշխանական տան հյուսիս գաղթելը, քրիստոնեություն ընդունելը և Զորագետի փոքրիկ թագավորի հովանու տակ մտնելը: Ապա, Հաղարծնի արձանագրության հիմամբ Զաքարյաններին Բագրատունիներից սերված համարելով՝ նրանց արմատները փնտրել է Տարոնի և Մոկքի առերես մահմեդականացած ու կիսաքրդացած Բագրատունիների մեջ, որոնց սերունդը ստեղծված ծանր պայմաններից ելնելով «ԺԱ դարու ուրիշ գաղթող իշխանների նման տուն ու տեղով փոխադրվել է Կյուրիկյան Բագրատունիների մոտ, որոնց հետ կարող էր խնամիական կապեր ունենալ»[40]: Ինչպես տեսնում ենք, Անբերդի արաբատառ արձանագրությունն այդ ժամանակ գիտությանն անհայտ լինելու պայմաններում Հաղարծնի արձանագրության պնդումը Կ.Տեր-Մկրտչյանին հավաստի է թվացել, ուստի աղբյուրների հաղորդումները բառացի ընկալելով՝ նա փորձել է դրանք հարմարեցնել ինչպես միմյանց,

---

[37] Դիվան հայ վիմագրության, պրակ VI, էջ 138:
[38] Ա. Գ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., գիրք առաջին, էջ 156:
[39] Ասլան Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 73-74:
[40] Կ. Տեր-Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 19-26:

այնպես էլ Զաքարյանների Բագրատունյաց ծագման իր տեսակետին: Դրան հասնելու համար նա Զաքարյանների նախնիներին հռչակել է կիսով չափ քրդացած ու առերես մահմեդականացած, իսկ Կյուրիկյաններին ասպավիները բացատրել է նրանց հետ ենթադրյալ խնամիությամբ: Բնականաբար, այս կերպ ստեղծված տեսակետը պատմագիտության մեջ քաղաքացիություն չէր ստանա:

Ս.Երեմյանը ևս Զաքարյանների արծրունիական ծագման տեսակետը զարգացնելիս կամա թե ակամա ընթացել է նախորդ հետազոտողի ուղով: Նրա կարծիքով, Զաքարյանները ծագել են Կորճայք աշխարհի Կարթունիք գավառից Լոռի գաղթած Արծրունիների քրդացած ճյուղից: Ըստ Ս.Երեմյանի, 1048թ. Մեծ Զավ գետի կիրճում սելջուկների դեմ բյուզանդացիների տարած հաղթանակից հետո «Զաքարյանների նախնի Խոսրովը «հատուածեալ ի քրթաց, ի Բաբիլական խելէն»...իր տոհմով անցնում է Գուգարք և ճանաչում Լոռվա թագավոր Կյուրիկե Ա-ի գերիշխանությունը, նրանից ստանալով Խոժոռնի գավառակը՝ համանուն ամրոցով» [41]: Դժվար չէ նկատել, որ գիտնականի տեսակետն Անբերգի արարատառ արձանագրության, Հաղբատի Խոստրով անունը կրող անթվակիր մի վիմագրի, Կիրակոս Գանձակեցու ու Վարդան վարդապետի վկայությունների պարզ միահյուսման և աղբյուրներով չհիմնավորվող պնդումների հանրագումար է: Եթե Ս.Երեմյանին այս վարկածն առաջադրելիս հայտնի լիներ, որ Հաղբատի անթվակիր վիմագրում հիշատակված ոմն Խոստրովր և նրա որդիները ավագ Սարգիսն ու Քարիմը Զաքարյանների հետ որևէ կապ չունեն,[42] ինչով պայմանավորված՝ դեպի Զորագետ Զաքարյանների գաղթի ավանդական ժամանակը հետ տարվելով թվագրվում է XIIդ. սկզբներով [43], ապա նա նման տեսակետ առաջ չէր քաշի: Բացի այդ, աղբյուրները Զաքարյաններին Կարթունիքի Արծրունիներից սերված համարելու և նրանց գաղթը Մեծ Զավ գետի կիրճի ճակատամարտի հետ կապելու որևէ կռվան չեն տալիս:

Այժմ դառնանք Զաքարյաններին քրդական արմատներ վերագրած աղբյուրներին: Մեզ հետաքրքրող հարցի մասին Կիրակոս Գանձակեցու տեղեկությունների մշուշապատ լինելը երևում է Զաքարյանների գաղթը գոնե մոտավոր չթվագրելուց, Հյուսիսային Հայաստանում նրանց նախնական բնակատեղին չհիշատակելուց և տոհմածառը թերի ու մասամբ սխալ ներկայացնելուց: Պատմիչը ոչ միայն չգիտի Զաքարեի (Զաքարիա) հայր ավագ Սարգսին, այլև նրա թոռներ Մեծ Սարգսին ու Վահրամին համարել է հայր ու որդի, իսկ նրանց հայր Զաքարեին՝ առաջինի պապը, երկրորդի հայրը: Այս հանգամանքները կասկածի տակ են դնում Զաքարյանների քրդական ծագման մասին նրա հայտնածը: Բացի այդ, նրա հաղորդումը հակասում է Վարդան վարդապետի ու Ստեփանոս Օրբելյանի տվյալներից բխող հետևյալ տրամաբանական եզրակացությանը: Ինչպես տեսանք, նրանցից առաջինը, իբրև Զորագետում Զաքարյանների նախնի, ճիշտ գիտի Զաքարեի հայր ավագ Սարգսին, իսկ երկրորդը Զաքարեին համարում է «հայ ազգաւ և ուղղափառ հաւատով»: Եթե անգամ ընդունենք, որ Սյունյաց

[41] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 3, էջ 676:

[42] Ա. Ի. Շահնազարյան, Զաքարյանների տոհմածառի հարցի շուրջ, էջ 203-208, Նույնի՝ Վահրամյանների իշխանությունը, Ե., 1990, էջ 21-29:

[43] Ա. Ի. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, էջ 29-31:

պատմիչը. իրականությունը կեղծելով. Օրբելյաններին դավաճանած ու նաև դրա շնորհիվ նրանց պաշտոններին, դիրքին ու տիրույթներին արժանացած Զաքարյաններին հայկական արմատներ ու լուսավորչական դավանանք է վերագրել, դարձյալ անբացատրելի կմնա, թե ինչու է գաղթելուց հետո քրիստոնյա դարձած Զաքարեի՝ իր ընօրրանում մահացած հայրը հայկական կամ գոնե այդպիսին դիտվող Սարգիս քրիստոնեական սրբանունը կրել: Ինչ վերաբերում է Կիրակոս Գանձակեցու այն հաղորդմանը, թե իբր Զաքարյանները սերել են քրդական հենց «Բաբիրական խելէն», ապա դա պատմագրական ավանդույթով պայմանավորված հեղինակային վկայություն է, որը, ինչպես երևում է Կիրակոս Գանձակեցուց օգտված Վարդան վարդապետի պատմածից, բացակայել է այդ պատմիչների հիմք աղբյուրում, ինչին ստորև կանդրադառնանք: Ավելին, Զաքարյանների պատմության՝ իրեն ավելի մոտ ընկած շրջանի մասին մշուշապատ ու երբեմն բացահայտ սխալ տեղեկություններ ունեցող Կիրակոս Գանձակեցուն ինչպես կարող էր ստույգ հայտնի լինել այն խելի անվանումը, որին իբր պատկանել են Զաքարյանների նախնիները: Բացի այդ, Զաքարյանների՝ մեզ հայտնի չորրորդ սերնդի ներկայացուցիչների պատմական հիշողությունը սահմանափակվում է իրենց պապի հոր միայն անվան իմացությամբ, ինչը ևս բացառում է Կիրակոս Գանձակեցու՝ «Բաբիրական խել»-ի մասին հաղորդման աղբյուրը Զաքարյաններից որևէ մեկը լինելը՝ Հետևաբար, պատմիչը Զաքարյանների ծագման մասին գրելիս կամ օգտվել է իրեն հասած հատվածական տեղեկություններից՝ դրանք կամ անաղարտ մուծելով բնագիր, կամ էլ դիմել է հիմնազուրկ հեղինակային վկայության:

Բնորոշ է, որ Վարդան վարդապետը ևս Զաքարյանների պատմության ակունքների մասին իր պատումը սեղմ, բայց ավելի փաստալից տալով հանդերձ (ավագ Սարգսին հավելելը, Լոռի-Զորագետ գաղթելը, Բագրատունի-Կյուրիկյաններին ապավինելն ու քրիստոնեություն ընդունելով նրանցից Խոժոռնին իբրև «տուն բնակութեան» ստանալը նշելը), շրջանցել է Զաքարյանների գաղթի թվագրումը: Մինչդեռ, նա առաջնորդվել է «բերել...զթիւ ժամանակին նշանաւոր իրաց եւ գործոց»[45] սկզբունքով: Նա Զորագետում իշխած բոլոր թագավորներին (բացառյալ Սմբատը) իմանալով հանդերձ, սկզբում անորոշ նշելով, թե Զաքարյանները «Հատուած եղեալ առ թագաւորսն Զորոգետոյ, որ ի Բագրատունեաց ազգէ», շարունակության մեջ ավելացնում է, որ «տուաւ նոցա տուն բնակութեան Խոշորնի»: Մնում է ենթադրել, որ պատմիչը, չիմանալով, թե Զաքարյանները կոնկրետ ում էին ապավինել, «թագաւորսն» բառն օգտագործել է կամ ընդհանրական իմաստով, կամ էլ՝ իրոք, այդ ժամանակ Զորագետում իշխել են երկու գահակից թագավորներ, որոնցից մեկն իր բաժնեմասում գտնվող Խոժոռնին շնորհել է նրանց: Բացի այդ, Զաքարյանների տոհմածառն ավագ Սարգսով համալրելով, այնուհետև տառացիորեն կրկնորդել է իր դասընկեր Կիրակոս Գանձակեցուն՝ թույլ տալով նույն սխալները: Իսկ այն, որ ոչ թե Կիրակոս Գանձակեցին է Վարդան վարդապետից օգտվել, այլ հակառակն է եղել, կասկածից դուրս է[46]: Միաժամանակ, հայտնի է այդ պատմիչների՝ իրենց

---

[44] Հմմտ., Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագումը, էջ 173:

[45] Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 147:

[46] Նույն տեղում, էջ 145-147, Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, Առաջաբան, էջ Կ-ԿԱ, Փ. Փ. Ա ն թ ա պ յ ա ն, Վարդան Արևելցի, գիրք Ա, Ե., 1987, էջ 282-284:

ուսուցիչ և XIIIդ. հայ պատմագրական դպրոցի հիմնադիր Վանական վարդապետի (1181-1251) մեզ չհասած Պատմությունից օգտված լինելը[47]: Ընդ որում, Վարդան վարդապետը, վկայակոչելով իր դասընկերոջ «Հօրն (Վանականին-Ա.Շ.) համանման» գրած լինելը, շեշտում է, թե «ոչ համարձակեցաք երեքկնել կամ բազմաբանել այլ համառօտ բերել միայն զթիւ ժամանակին նշանաւոր իրաց և գործոց»[48]: Ուրեմն, Վարդան վարդապետը Զաքարյաններին անդրադառնալիս ի դեմս իր ուսուցչի ու դասընկերոջ աշխատությունների, առնվազն երկու աղբյուր է ունեցել, քանզի Վանական վարդապետը չէր կարող լռության մատնել իր ժամանակի ամենահզոր ու Հայտնի Զաքարյան տոհմի պատմությունը, լինելով նրա Վահրամյան ճյուղի հովանավորյալը[49]: Այս հիմամբ ենթադրելի է, որ Վանական վարդապետի աշակերտների աշխատություններում տեղ գտած Զաքարյանների քրդական ծագման վարկածն ու տոհմածառի երկուստեք սխալ ներկայացված հատվածը փոխառյալ են նրանց ուսուցչից: Փ.Անթապյանը ևս գտել է, որ Վարդան վարդապետի աշխատության ՁԲ-ՁԸ հատվածների սկզբնաղբյուրը «մերձավոր ճշտությամբ Վանական վարդապետի աշխատությունն է»[50]: Նկատենք, որ ՁԲ հատվածում ընդգրկված է նաև Զաքարյանների մասին պատումը : Ինչ վերաբերում է Վարդան վարդապետի և Կիրակոս Գանձակեցու հաղորդումների տարբերություններին, ապա դրանք բացատրելի են՝ ա) առաջինի գրելաոճից ու աշխատության բնույթից (պատմագրական ժամակագրություն) բխող կարճառոտությամբ, բ) հիմք աղբյուրին առավելություն տալով, որի հետևանքով Կիրակոս Գանձակեցու «ի քրդաց, ի Բաբիրական (Բաբիլական- Ա.Շ) խելէն»[52] արտահայտությունը ներկայացվել է «ի քուրդ ազդէ» ձևով, գ) պատումի բովանդակության զարգացման տրամաբանությունից բխող հեղինակային հավելմամբ՝ «հաւատացին ի Քրիստոս և պատուեցան», դ) իր կողմից «մանրապատում գրողք» անվանված[53] աղբյուրներից օգտված լինելով, որի արդյունք է Զաքարյանների տոհմածառում ավագ Սարգսի հավելումը: Զաքարյանների մասին նման աղբյուրների գոյությունը փաստվում է 1211թ. Հաղբատում գրված մի ձեռագրի հիշատակարանով[54]: Ասվածը նաև հիմք է տալիս պնդելու, որ Զաքարյանների քրդական ծագման վարկածը հայ պատմագրության մեջ սկսել է շրջանառվել XIIIդ. առաջին կեսին:

Զաքարյանների քրդական ծագումը մատնանշող աղբյուր է դիտվել նաև XVIIդ. պատմիչ Զաքարիա Սարկավագի աշխատությունը, ինչը նրա հաղորդման իմաստի թյուրըմբռնման արգասիք է: Պատմիչն անդրադառնալով Զաքարյաններին և ընդգծելով Կիրակոս Գարձակեցու շարադրանքի համառոտությունը՝ «զի համառօտ պատմէ Կիրակոս», շարունակում է. «Ի

---

[47] Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 8, 178, Վարդան վարդապետ, էջ 146-147:

[48] Վ ա ր դ ա ն վարդապետ, էջ 146:

[49] Մանրամասն տես Ա. Ի. Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Վահրամյանների իշխանությունը, էջ 164-174:

[50] Փ. Փ. Ա ն թ ա պ յ ա ն, նշվ. աշխ., գիրք Ա, էջ 283-284:

[51] Վ ա ր դ ա ն վարդապետ, էջ 138-139:

[52] «Բաբիլական խել» ընթերցման արդարացված լինելու մասին տես Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան Հայ պատմագրության մեջ, էջ 145, ծան. 31:

[53] Վ ա ր դ ա ն վարդապետ, էջ 151:

[54] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 71:

յերկրին Բաբիլացւոց՝ այր ոմն քրիստոնեայ՝ Զաքարիա անուն՝ կարգեալ իշխան յազգէն Մարաց, և վշտացեալ ի նոցանէ, ոչ կարաց կեայ անդէն: Եւ գտեալ ժամանակ, առնու ամենայն ըստոծինս, ծառայս և աղախինս, ախիւ բանակի իւրոյ հատուածեալ ի Բաբիլական երկրէն, անկանի առ տէրութիւնն Պարսից: Եւ անտի գայ մեղմով և մտանէ ի սահմանս Հայոց և գնայ յերկիրն Վրաց: Եւ անդ գտեալ իշխանութիւն ի թագաւորացն Վրաց, մեծանայ յոյժ: Եւ յետ նորա որդի իւր Վահրամ: Եւ յետ նորա՝ որդի իւր Սարգիս, որ եղև իշխան մեծ: Սմա եղեն որդիք երկու, անուն առաջնոյն Զաքարէ, և երկրորդին Իւանէ՝՝»: Հղումից երևում է, որ Զաքարիա Սարկավագը Կիրակոս Գանձակեցու «Բաբիրական (–Բաբիլական) խել» դարձվածքը երկիցս «Բաբիլական (–Բաբելոնի) երկիր» իմաստով է մատուցում, իսկ Զաքարիային քուրդ չի համարում այլ՝ «մարաց ազգի՝՝ կողմից Բաբելացիների երկրում իշխան կարգված՝ Զաքարիա անունով ոմն քրիստոնյա»: Հետևաբար, նրա «կարգեալ իշխան յազգէն Մարաց» խոսքերը ոչ թե Զաքարիայի մար, այսինքն՝ քուրդ լինելն են մատնանշում, այլ՝ մարերի կողմից Բաբելացիների երկրում իշխան կարգվելը : Զաքարիային պատմիչի քուրդ չհամարելը երևում է նաև Վաչուտյանների ծագման նրա վարկածից, ըստ որի Զաքարիան «ունէր և ծառայ մի ևս Սարգիս անուն՝ յազգէ Աժդահակայ» : Այսպիսով, հիմք ունենալով մարերի՝ «ի սերմանէն Աժդահակայ», «զզարմիցն Աժդահակայ», «զարմս Աժդահակայ» լինելու մասին Մովսես Խորենացուց եկող՝՝ և հայ պատմագրության մեջ տիրապետող կարծիքը, Զաքարիա Սարկավագը պնդել է Վաչուտյանների մարական (–քրդական) ծագումը : Մինչդեռ, նրանց այուզերեն Զաքարիայի դեպքում «այր ոմն քրիստոնեայ» արտահայտությամբ է բավարարվել: Ըստ երևույթին, Ղ.Ալիշանը Զաքարյաններին մարահայեր է համարել՝ ելնելով Զաքարիա Սարկավագի վկայությունից:

Այսպիսով, Զաքարիա Սարկավագն արմատապես հեռացել է Կիրակոս Գանձակեցու շարադրանքից և փաստել Զաքարիայի քրիստոնյա իշխան լինելը: Դա բացատրելի է երկու պատճառով. կամ նրա կասկածն է հարուցել ազգությամբ քուրդ, հետևաբար մահմեդական Զաքարիայի ոչ արևելյան ու ոչ մուսուլմանական անունը, կամ էլ, որ ավելի հավանական է, նա «հետևել է ոչ միայն իրեն իբրև աղբյուր ծառայող Կ.Գանձակեցու պատմության, այլև

---

[55] Զաքարէայ Սարկավագի Պատմագրութիւն, հ. առաջին, Վաղարշապատ, 1870, էջ 11:

[56] Պատմիչը մար և քուրդ էթնոնիմները համարժեք է դիտում (նույն տեղում, էջ 60-61, 146-148):

[57] Զաքարիա Սարկավագի խոսքերի իմաստը ռուսերեն ճիշտ է թարգմանել նաև Մ. Օ. Դարբինյան-Մելիքյանը. "В стране вавилонян некий муж, христианин по имени Закарий, которого мари поставили своим князем" (Закарий Канакерци, Хроника, перевод с армянского, предисловие и комментарий М. О. Дарбинян-Меликян, М., 1969, с. 242).

[58] Զաքարիա Սարկավագ, էջ 12:

[59] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և Ներածությունը Մ Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սողոմոնեանի, Ե., 1991, էջ 83-84, 176:

[60] Ի դեպ, Վաչուտյանների տոհմածառի ակունքների թերիմացությունը (Սարգսի հայր Վաչուտին չիմանալը) կասկածի տակ է դնում Կիրակոս Գանձակեցու կողմից հայ համարված (Կիրակոս Գանձակեցի, էջ 365) այդ տոհմի քրդական ծագման մասին պատմիչի պնդումը:

լրացրել է ուրիշ գրավոր աղբյուրներից կամ ավանդությունից»[61]: Որ Զաքարյանների մասին մեզ չհասած գրավոր աղբյուրներ եղել են, արդեն տեսանք ու ստորև ևս կփորձենք փաստարկել: Ինչ վերաբերում է նրանց մասին հյուսված ավանդություններին, ապա դրանց գոյությունն ապացուցվում է XIX դ. վերջերին Ե.Լալայանի գրառածով: Զաքարիա Սարկավագը նաև էապես լրացրել է Կիրակոս Գանձակեցու պատմածը այն համարելով համառոտ: Ուշագրավ է, որ նա Մեծ Սարգսի որդի Զաքարեին անվանում է «վերջին Զաքարիա», մինչդեռ վերջինիս թոռ և 1232 թվակիր մի ձեռագրի հիշատակարանում «նորածին» հիշատակվող Զաքարեին Կիրակոս Գանձակեցին քաջ գիտի և քանիցս հիշատակում է[64]: Բացի այդ, Զաքարիա Սարկավագը Զաքարյանների մասին պատումն ավարտում է այդ նույն Զաքարեի հայր Շահնշահի (+1261) գործունեության՝ 1236թ. կատարված մոնղոլական նվաճմանն անմիջապես հաջորդած շրջանով՝: Ընդ որում, եթե Կիրակոս Գանձակեցին չեշտում է մոնղոլական նվաճման ժամանակ Շահնշահի թուլամորթությունն ու անգամ սեփական տիրույթները պաշտպանելուց հրաժարվելը, ապա Զաքարիա Սարկավագը պնդում է, թե իբր Ռուսուդան թագուհին «իբրև ետես...թէ ոչ կարէ ընդդէմ կալ նոցա, յանձն առնէ զերկիր իւր Շահանշահի և ինքն փախչի յԱփխազս»՝: Ասվածի հաշվառմամբ պնդելի է, որ Զաքարիա Սարկավագն անմիջաբար կամ միջնորդավորված օգտվել է XII դ. առաջին կեսին պատկանող մեկ կամ ավելի աղբյուրներից, որոնց հաղորդումները ժամանակագրորեն սահմանափակվել են մոնղոլական նվաճմանն անմիջապես հաջորդած շրջանով: Նման աղբյուրներից ու բանավոր ավանդություններից Զաքարիա Սարկավագի օգտված լինելը երևում է նաև Զաքարյանների գաղթի նկարագրությունից: Այն զուգահեռներ ունի, ոչ միայն Բաբելոնից Հայկ Նահապետի գաղթի խորենացիական պատումի՝՝, այլև Զաքարյանների մասին Իոաննե Բագրատիոնիի վերոբերյալ պատմածի հետ: Եթե այդ հանգամանքներից առաջինը բացատրելի է միջնադարյան հայ պատմագրության մեջ խորենացիական ավանդույթների կենսունակությամբ, ապա երկրորդը, այսինքն՝ էթնոմշակութային տարբեր միջավայրերում հյուսված պատումների նմանությունը, գրանցում առկա պատմական իրականության տարրերի երկուատեք անկախաբար արձանագրմամբ:

Համեմատաբար վերջերս Զաքարյանների ծագման հարցը չոչափող մի այլ գրչագիր աղբյուր ևս մտավ գիտական շրջանառության մեջ՝: Ինչպես համոզիչ եզրակացրել է Յու.Վարդանյանը (Գ.Տեր-Վարդանյան) և լրացուցիչ փաստարկել Հ.Մարգարյանը, այն, ամենայն հավանականությամբ, Մինաս Համթեցու կողմից 1682-1689 միջակայքում Զաքարիա Սարկավագի աշխատությունից որոշ վրիպակներով ու կրճատումներով արված քաղագրություն

---

[61] Ասլան Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 71:
[62] Երվանդ Լալայան, նշվ. աշխ., էջ 320-321:
[63] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 178:
[64] Կիրակոս Գանձակեցի, էջ 288, 293, 321, 380, 392, 393:
[65] Զաքարիա Սարկավագ, էջ 14:
[66] Նույն տեղում:
[67] Մովսես Խորենացի, էջ 33:
[68] Այն կրում է «Պատմութիւն քաղաքին յԱնւոյ» խորագիրը. տես Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Ե., 1983, էջ 107-122:

է[69]: Դրանով Ա.Հովհաննիսյանի հակառակ ենթադրությունը մերժվել է[70]: Քաղաքության՝ Զաքարյաններին նվիրված հատվածից երևում է, որ նրա հեղինակն օգտվել է նաև Կիրակոս Գանձակեցուց: Այսպես, օրինակ, նա բաց է թողել Զաքարիայի քրիստոնյա լինելու մասին Զաքարիա Սարկավագի հաղորդումը, և վերջինիս «ի յերկրին Բաբիլացւոց» արտահայտությունը փոխարինել է «ի Բաբելական խելէն»-ով՝ դրա տակ հասկանալով մարաց աշխարհը: Սակայն նա ճիշտ է վերարտադրել Զաքարիայի մար (քուրդ) չլինելու մասին իր հիմնական սկզբնաղբյուրի պնդումը գրելով հետևյալը. «այր ոմն Զաքարիայ անուն, կարգեալ իշխան աշխարհին Մարաց»[71]:

Զաքարյանների ու հայ նախարարական տոհմերի ծագման շուրջ XIII, XVIIդդ. հայ պատմիչների և Մովսես Խորենացու առաջադրած վարկածներում կան էական զուգահեռներ, որոնք արտացոլում են հետխորենացիական հայ պատմագրության մեջ Պատմահոր ավանդույթների հարատևումը: Դա բնավ պատահական չէ, քանի որ Մովսես Խորենացու Պատմությունը միջնադարյան Հայաստանի գաղափարախոսության սյուներից էր: Աղբյուրներին քննական մոտեցում ցուցաբերելով և հնարավորինս եզրակացությունը փաստից բխեցնելով հանդերձ, Պատմահորը միշտ չէ, որ հաջողվել է վեր կանգնել իր ժամանակի իրողություններից և տուրք չտալ նաև պատմագրական ընդհանուր ավանդույթներից բխող կանխակալ ըմբռումներին: Դրանցից էր իր նկարագրած շրջանում գերիշխող և քաղաքական ատաղձ ունեցող այն տեսակետը, ըստ որի, հայկական նախարարական տները ծագել են կամ Հայկ նահապետից, կամ ունեն օտար արմատներ և որ հայկյան սերում ունեցողներն ավելի մեծատոհմիկ են, քան օտար ծագումովները: Այսպես, խոստանալով հանդերձ «զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշդիւ՝ զթագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից», նա քիչ անց գրել է. «ով ոք ի ցեղիցս որոշելոց՝ ոնտանի և մերազնեայ, և ոյք ոմանք եկք ընտանեցեալք և մերազնացեալք»[72]: Այսինքն, Մովսես Խորենացին իր քննությունը սկսել է՝ հիմք ունենալով կաղապարային այն մտայնությունը, որ հայ նախարարական տները ծագել

---

[69] Ցու. Հ. Վ ա ր դ ա ն յ ա ն, «Պատմութիւն քաղաքին յԱնւոյ» բանաքաղության հեղինակի ու ժամանակի հարցի շուրջ (Պատմա-բանասիրական հանդես, 1985, N 2, էջ 212-225), Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, էջ 140-142:

[70] Ա. Գ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Նշվ. աշխ., դիրք առաջին, էջ 153: Հ.Մարգարյանը, հղելով տողերիս հեղինակին («Վահրամյանների իշխանությունը», էջ 21, ծան. 4, էջ 39), նկատել է, որ մենք փաստորեն ընդունել ու զարգացրել ենք Ա.Հովհաննիսյանի չարդարացվող վարկածը և «Պատմութիւն քաղաքին յԱնւոյ»-ի քաղաքողին համարել XIIIդ. Անանուն հեղինակ ու նույնիսկ Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի ավագ ժամանակակիցը (Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, էջ 142, ծան. 18): Հարկ է նկատել, որ ժամանակին Ա.Հովհաննիսյանի վարկածին ծանոթ չլինելով, այն զարգացնել չէինք կարող: Դրա հետ մեկտեղ, Գ.Տեր-Վարդանյանի հոդվածին քաջածանոթ լինելով՝ Մինաս Համթեցուն XIIIդ. առաջին կեսի հեղինակ համարելու մտայնությունից զերծ ենք եղել: «Պատմութիւն քաղաքին յԱնւոյ» քաղաքությունն ընդգրկող 119 էջը վկայակոչելով՝ նկատի ենք ունեցել Զաքարիա Սարկավագով միջնորդավորված և հաստատապես XIIIդ. առաջին կեսով թվագրվող հիմք սկզբնաղբյուրի հեղինակին, ինչը վերևում փորձեցինք ցույց տալ:

[71] Մ խ ի թ ա ր Ա ն ե ց ի, էջ 119:

[72] Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 11-12:

են «ի պաւակաց նախնւոյն մերոյ Հայկայ և յայլոց»[73], ինչը փորձել է ապացուցել՝ երբեմն դիմելով քննության չդիմացող ստուգաբանական մեկնությունների: Հաճախ էլ ընտրել ու հորինել է պատշաճ միջավայր՝ դասավորելով ճշմարտանման փաստերը[74]: Դրա վկայություններից է նրա ստեղծած այն ընդհանրական սյուժեն, ըստ որի, որոշ հայ նախարարական տների պատմությունը սերտորեն աղերսվել է հարավին:

Հետագայի հայ պատմիչները ևս, ոչ միայն Պատմահոր նման չեն կարողացել վեր կանգնել ժամանակի իրողություններից, այլև մեզ հետաքրքրող խնդրում ընթացել են նրա նախանշած ուղով[75]: Բանն այն է, որ XIդ. վերջերից մինչև 1236թ. մոնղոլական նվաճումն ընկած՝ պատմական թեկուզ և կարճ ժամանակով սելջուկյան լծից Հյուսիսային Հայաստանի ազատագրմամբ ու երկրի կյանքը բնականոն զարգացման հուն մտնելով պայմանավորված՝ կատարվեցին արմատական տեղաշարժեր: Դրանց դրսևորումներից էր հայ ֆեոդալական դասակարգի վերակենդանացումը: Այն նշանավորվեց ոչ այնքան նախորդ շրջանում պատմական ասպարեզից արտամղված հին իշխանական տների մնացորդների վերընձյուղումով, որքան նորերի առաջացմամբ: Վերջիններս դրանով պարտական էին Զաքարյանների գլխավորած հայ-վրացական բանակի կազմում Հյուսիսային Հայաստանի ազատագրման համար մղված մարտերին մասնակցությանը, այսինքն՝ ծառայությանը: Դրա դիմաց Զաքարյաններից բաժնեկալվածքներ ստանալով՝ նրանք հիմնել էին իրենց իշխանությունները: Սակայն, ծառայությունը ֆեոդալական իրավունքը սրբագործող պատվարժանության բավարար պայման չէր, քանի որ համաձայն խորենացիական ըմբռնման, բացակայում էր մեծատոհմիկությունը[76]: Բնականաբար, սկսվում են այդ բացի վերացմանն ուղված քայլեր, որոնք ժամանակի իրողություններով ու հրամայականով թելադրված լինելով հանդերձ, դուրս չէին գալիս Պատմահոր ստեղծած կաղապարից: Դրա վառ օրինակը Զաքարյանների ծագման շուրջ արծածված վարկածներն են: Ծառայությամբ դառնալով ամենահզոր ու ազդեցիկ հայկական իշխանական տոհմը՝ Զաքարյաններն առավել մեծ ուշադրություն պետք է դարձնեին իրենց պատվարժանության լիարժեքացմանը, առավել ևս, որ դա պարտադրված էր նաև քաղաքական այլ գործոններով, որոնք նոր բարձրացած իշխանական այլ տներին ևս ստիպում էին որոշ քայլեր անել[77]:

Երբ դրվում էին Զաքարյանների անշեղ վերելքի ամուր հիմքերը, նրանք ի թիվս այլ պատճառների, մեծատոհմիկություն շահելու միտումով իրենց Արծրունի հռչակեցին: Երբ դրա գործնական անհրաժեշտությունը վերացավ, և դարձան Բագրատունիների նախկին տիրույթների տերը, նրանք ոչ միայն պահի հրամայականով, այլև հեռամետ քաղաքական նպատակներով թելադրված՝ քայլ առ քայլ շրջանառության մեջ դրեցին

---

[73] Նույն տեղում, էջ 104:

[74] Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Ե., 1987, էջ 545:

[75] Այս հանգամանքի մասին մանրամասն տե՛ս Հ.Մարգարյան, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան Հայ պատմագրության մեջ, էջ 139, 143-144, 149 և այլն:

[76] Նիկողայոս Ադոնց, նշվ. աշխ., էջ 547:

[77] Օրինակ, Պռոշյան-Խաղբակյաններն իրենց արմատները կապում էին Վդ. ալրած Բակ իշխանի (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, էջ 182), իսկ Օրբելյանները՝ ձենաց աշխարհի հետ (Ստեփաննոս Օրբելյան, էջ 369-371):

իրենց բագրատունիական ծագման վարկածը: Քանի որ դա ևս ոչ այնքան հիմնազուրկ լինելու, որքան վրաց Բագրատունիների հակազդեցության հետևանքով քաղաքացիություն չստացավ՝ հայ պատմագրության մեջ սկսեց արծածվել Զաքարյանների օտար՝ քրդական, ծագման վարկածը: Դա կատարվեց 1210-ական թվականներից ոչ շուտ, քանի որ Հաղարծնի վերը քննված արձանագրությունը հաստատապես թվագրելի է 1212-ով:

Փորձենք հիմնավորել, թե ինչու ընտրվեց Զաքարյանների օտար և հենց քրդական սերման վարկածը: Քանի որ ըստ Մովսես Խորենացուց եկող պատմագրական ավանդույթի՝ մեծատոհմիկության չափանիշի հիմքում հայկյան կամ օտար արմատներ ունեցող ծագումն էր, Զաքարյանների սերումը Հայկ նահապետի հետ կապելու դեպքում նրանք մեծատոհմիկությամբ կգերազանցեին վրաց Բագրատունիներին, որոնց հայ նախնիները Պատմահոր համառ պնդմամբ հրեական, այսինքն՝ օտար ծագում ունեին[78]: Հետևաբար, ֆեոդալական աստիճանակարգության սկզբունքներից մեկը կխախտվեր, որը բացառվում էր: Ինչ վերաբերում է Զաքարյանների քրդական սերման վարկածի ընտրությանը, ապա դա բացատրվում է հետևյալով: Ինչպես վերը տեսանք, տարբեր էթնոմշակութային միջավայրերի ու ժամանակների արդյունք հայկական և վրացական գրչագիր աղբյուրները Զաքարյանների հարավից-հյուսիս գաղթած լինելու հարցում միահամուռ են: Ընդ որում, դրանցից երեքը փաստում են այն Պարսկաստանի վրայով կատարված լինելը: Սելջուկյան արշավանքների և ապա տիրապետության դժնդակ պայմաններում Զաքարյանների գաղթը սովորական երևույթ պետք է համարել: Աղբյուրները զգալի տեղեկություններ են պահպանել այդ ժամանակ հայ ազնվականական տների կողմից իրենց բնօրրանները լքելու մասին[79]: Այդ երևույթը մեծ չափեր էր ընդունել Հայաստանի հարավային գավառներում, որտեղից բնակության ապահով վայրում հաստատվելու նպատակով գաղթել էր նաև Զաքարյանների նախնին: Հյուսիսային Հայաստան անցնելով Պարսկաստանի վրայով նա հանգրվանել էր Լոռի-Զորագետի Կյուրիկյան փոքրիկ թագավորությունում: Զաքարյանների՝ հարավից գաղթած լինելը, անկասկած, նպաստել է նրանց օտար ծագման վարկածին արժանահավատություն հաղորդելուն: Լոռի-Զորագետում Զաքարյանները հաստատվեցին XIIդ. սկզբին[80]: Սակայն 1110/1113թ. այն գրավեցին սելջուկները, իսկ

---

[78] Մովսես Խորենացի, էջ 69, 104:

[79] Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ, Կ. Ցուզբաշյանի, Ե., 1963, էջ 22, Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 307, Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 104, Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 49, Ստեփաննոս Օրբելյան, էջ 319:

Ա. Ի. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը, էջ 29-31: Զաքարյանների տոհմածառի սրբագրմանը նվիրված մեր հոդվածում (Պատմա-բանասիրական հանդես, 1989, N 3, էջ 209), առանց մեզ իրազեկելու, կրճատման նպատակով խմբագրական միջամտության հետևանքով ստացվել էր, որ Զաքարյանների Լոռի-Զորագետում հաստատվելը թվագրում ենք XIդ. կեսերով, մինչդեռ դրան նախորդած քննությունից բխել էր, որ այն կատարվել է XIIդ. սկզբին: Դա հոդվածի կրճատված մասի օգտագործմամբ ցույց ենք տվել 1990թ. լույս տեսած վերը հղված մենագրությունում: Հետագայում Հ.Մարգարյանը Զաքարյանների գաղթը մերժելով հանդերձ, ևս գտել է, որ այն

1118/1124թ. Դավիթ IV Շինարարը, և Լոռի-Զորագետն անցավ վրացական թագավորությանը[81]: Զաքարյանների պատմության Կյուրիկյան շրջանն այնքան կարճ տևեց, որ միայն Վարդան վարդապետն է հստակ արձանագրել: Դա ակնարկում է նաև Զաքարիա Սարկավագը, ըստ որի Զաքարյանների նախնին Պարսկաստանից մտել է հայոց սահմանները, իսկ այնտեղից՝ վրաց երկիրը: Սնացած աղբյուրներն այն լռության են մատնում, ինչից հետևում է, թե իբր Զաքարյաններն անմիջապես մուտք են գործել վրաց իրականություն և ծառայության անցել վրաց թագավորների մոտ:

Հայ պատմագրության մեջ Զաքարյանների ծագման քրդական վարկածի ընտրության մյուս կարևոր պատճառը, ըստ Պատմահոր, մարերի՝ աժդահակյան սերումն է: Զաքարիա Սարկավագի կողմից մար և քուրդ էթնոնիմների համարժեքության փաստումը հեղինակային վկայության արդյունք չէ: Վ.Մինորսկու դիտողությամբ, Մովսես Խորենացուց սկսած հայ մատենագրության մեջ մար տերմինն օգտագործվել է իբրև քուրդ էթնոնիմի հոմանիշ[82]: Զարգացնելով Վ.Մինորսկու դիտարկումը, Հ.Մարգարյանը ցույց է տվել, որ քուրդ տերմինը գործածական է դարձել XII-XIIIդդ. հայ գրչագիր հուշարձաններում, այն էլ էթնիկականից լայն նշանակությամբ, մասնավորապես, իբրև մահմեդականի հոմանիշ[83]: Հենց դա է պատճառը, որ Կիրակոս Գանձակեցու պատմածին Վարդան վարդապետն անհիմն հավելել է Զաքարյանների հավատափոխությունը: XIIIդ. հայ պատմիչները, Զաքարյաններին քրդական արմատներ վերագրելով, ոչ միայն տուրք են տվել խորենացիական ավանդույթներին, այլև դրանք հարմարեցրել են պատմական նոր իրավիճակով թելադրված պայմաններին: Նախ, Աժդահակից սերված դիտվող Զաքարյաններն ազնվազարմությամբ զիջելու էին վրաց Բագրատունիներին, որովհետև, եթե վերջիններիս նախնիները. Պատմահոր համաձայն, նախարարական տուն են հաստատվել նախքան Վաղարշակը, ապա Աժդահակի սերունդ Մուրացյանները՝ նրա օրոք: Բացի այդ, ըստ Մովսես Խորենացու, Վաղարշակը Մուրացյաններին կարգել էր «երկրորդ թագաւորութեան»[84]: Ուստի, քանի որ Պատմահայրը

իրողություն լինելու դեպքում XIIդ. սկզբներից վաղ չէր կարող կատարվել (Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագումը, էջ 164-169):

[81] Մատենադարան, ձեռ. N 3031, թ. 53-55, Վ ա ր դ ա ն վարդապետ, էջ 119, 156:

[82] V. M i n o r s k y, նշվ. աշխ., էջ 127-128:

[83] Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան Հայ պատմագրության մեջ, էջ 146-147:

[84] Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի, էջ 112: Հմմտ. Յ ո վ Հ ա ն ն ու կաթողիկոսի Դ ր ա ս - խ ա ն ա կ ե ր տ ե ց ւ ո յ պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 26: Զաքարյանների քրդական ծագման վարկածի ձևավորմանը կարող էր նպաստել նա մի հանգամանք: Թամար թագուհու առաջին պատմիչի խոսքերից հետևում է, որ նրանք Քուրդ Վաճառի (Դեբեդ) ձորում ևս ունեին կալվածքներ, որոնք պատկանում էին Մեծ Սարգսի եղբորորդի Բլուզ Զաքարեին (Քարթլիս ցխովրեբա, հ. 2, էջ 50-51, վրացերեն): Ուրեմն, Լոռի-Զորագետում հաստատվելուց հետո նրանց տիրույթները ներառել են նաև Քուրդ Վաճառի ձորի որոշ հատվածներ: Այդ տեղանունը ենթադրում է այնտեղ քուրդ էթնիկական տարրի երբևէ առկայությունը: Անկախ Քուրդ Վաճառի ձորում քրդերի ապրելու ժամանակից (նախքան Զաքարյանները կամ համաժամանակ), այդ հանգամանքը և քրդերի բնօրրան համարվող հարավից Զաքարյանների գաղթած լինելը կարող էր ոչ միայն նրանց քրդական ծագման վարկածի ատաղձ ծառայել, այլև նպաստել դրան արժանահավատություն հաղորդելուն:

Մուրացյաններին համարել է Արշակունյաց հայոց թագավորությունում երկրորդ նախարարական տունը, XIIIդ. հայ հեղինակները, նրա հետևությամբ Զաքարյաններին քրդական՝ ուժդահակյան, արմատներ վերագրելով, հիմնավորել են վրացական թագավորությունում երկրորդ տոհմը լինելու նրանց իրավունքը: Այսինքն՝ պատմական անուղղակի «կռվաններով» հաստատագրել են իրենց ժամանակի իրողությունը: Հետևաբար, Զաքարյանների քրդական ծագման ավանդությունն օրվա պահանջի արձագանք էր:

Վերոգրյալի հաշվառմամբ ակնհայտ է նաև Զաքարյանների պարսկական ծագման՝ Արտաքսերքսես I Աքեմենյանի ազգականները լինելու շուրջ վրաց իրականության մեջ առաջ քաշված և ժամանակի իրողությունների ամրագրմանը միտված՝ պաշտոնական պատմագրության մեջ տեղ գտած տեսության անհիմն լինելը: Պատահական չէ, որ այն Գ.Հովսեփյանը առանց որևէ քննության առասպել է համարել : Զաքարյանների ծագումնաբանությունը հատուկ քննության նյութ դարձրած Շ.Մնսխիան իր հերթին գտել է, որ վրաց պատմիչը դրանով «Մխարգրձելիներին (Զաքարյաններին-Ա.Շ.), մասնավորապես Զաքարիա Մխարգրձելիին ազգական է դարձրել այնպիսի հին ու հզոր տոհմի և պատմական դեմքի հետ, որպիսին էր Իրանի Աքեմենյանների արժանավոր ներկայացուցիչներից մեկը՝ Արտաքսերքսես I-ը... Ինչպես պարզվում է, XII-XIIIդդ. Վրաստանում հնագույն արքայական տոհմին Մխարգրձելիների ազգական լինելու տեսություն էր ստեղծվել»[86] : Ինչպես ցույց է տվել Կ.Կեկելիձեն, նման տեսություն է ստեղծվել նաև վրաց և օսական Բագրատունյաց արքայատոհմերի ծագման շուրջ, ըստ որի, առաջինը սերվել է հրեական կիսաառասպելական Դավիթ թագավորից, իսկ երկրորդը՝ նրա եղբորորդի Եփրեմից: Դրանով շեշտվել է վրաց Բագրատունիների ազնվազարմությունն օսական Բագրատունի արքայատոհմի նկատմամբ, քաղաքական ենթատեքստ ունենալով Դավիթ Սոսլան թագավորի հանդեպ նրա կին Թամար թագուհու առավելությունը:[87] Այս իրողության հաշվառմամբ պարզ է, որ իրենց բագրատունիական ծագում վերագրելու Զաքարյանների փորձերը դատապարտված էին ձախողման: Մյուս կողմից, վրաց իրականության մեջ պետք է ստեղծվեր Զաքարյանների ծագման այնպիսի ավանդություն, որը կհամապատասխաներ վրացական պետությունում նրանց զբաղեցրած դիրքին ու աստիճանին: Այդպիսին դիտվեց քննվող տեսությունը, որը ստեղծվեց XIIդ. վերջերին կամ XIIIդ.սկզբներին[88], անպայման հիմք ունենալով Զաքարյանների գաղթը Պարսկաստանի վրայով կատարված լինելը, ինչի շուրջ ավանդությունը հասել էր անգամ XVIIIդ. հեղինակ Իոաննե Բագրատիոնիին: Դրանով այդ տեսությունը պարուրվում

---

[86] Գ ա ր ե գ ի ն Հ ո վ ս ե փ յ ա ն, Խաղբակյանք կամ Զռոյանք Հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 2:

[86] Շ ո թ ա Մ ե ս խ ի ա, նշվ. աշխ., էջ 210:

[87] Կ. Կ ե կ ե լ ի ձ ե, Վրաց քաղաքական մտածողության մի դրվագ դասական ժամանակաշրջանի գրականության մեջ (էտյուդներ վրաց հին գրականության պատմությունից, հ. 1, Թբիլիսի, 1956, էջ 312-318, վրացերեն):

[88] Մանրամասն տես Ա ր տ ա շ ե ս Շ ա հ ն ա զ ա ր յ ա ն, Զաքարյանների բուն տոհմանունը (Հայոց պատմության հարցեր, Ե., 2001):

էր իրապատումության շղարշով, իսկ Զաքարյանները հին ու օտար արքայատոհմի ժառանգորդներ էին հռչակվում: Բայց, ինչպես հայ պատմագրության ըմբռնմամբ էր, մեծատոհմիկությամբ ղիջում էին իրենց անմիջական սյուզերեն վրաց Բագրատունիներին՝ դարձյալ լինելով «երկրորդ թագաւորութեան»: Այս հարցում հայ և վրաց պատմագրության մոտեցումների նույնականությունն օրինաչափ է: Նրանք երկուստեք հետևում էին պատմագրական ընդհանուր (հայ պատմիչները՝ Մովսես Խորենացով միջնորդավորված) ավանդույթներին և ամրագրում ժամանակի քաղաքական իրողությունները:

Հ.Մարգարյանը Լոռի-Զորագետում Զաքարյանների կարծեցյալ քուրդ նախնիների հայանալն իրավացիորեն բացառել է Կյուրիկյան թագավորության հոգեվարքով պայմանավորված՝ այնտեղ էթնիկ պատկանելության փոփոխության համար անհրաժեշտ քաղաքական, էթնոմշակութային ու դավանական միջավայրի բացակայությամբ, ինչպես նաև՝ հակառակ էթնոկրոնական գործընթացներով ու քրդերի էթնիկական ինքնատիպությամբ[89]:

Այսպիսով, Զաքարյանների նախնիների ազգային պատկանելության մասին ամենաարժանահավատ տեղեկությունը պահպանել է Ստեփանոս Օրբելյանը, որը Լոռի-Զորագետում Զաքարյանների երկրորդ սերունդը ներկայացնող Զաքարիային հիշատակել է իբրև «հայ ազգաւ և ուղղափառ հաւատով» իշխանի: Ժամանակին Զաքարյանների տոհմածառի մեր առաջարկած սրբագրման շնորհիվ նրանից նաև ոչ հայկական Խոստրով ու Քարիմ անուններով անձանցով ներկայացող մի սերունդ օտարելու և դրանով իսկ Զաքարյանների գաղթը XIդ. սկզբներից ոչ վաղ կատարված լինելը բացառելու լույսի տակ Զաքարյանների նախնիների էթնիկ պատկանելությունը պարզելու խնդրում Սյունյաց պատմիչի վկայությունը բացառիկ կարևորություն ունի: Պարզվում է, որ XIդ. առաջին կեսին ապրած Զաքարիան լիարժեք հայ էր ազգության ժամանակի կրոնադավանական ըմբռնման բոլոր չափանիշներով՝ ինչպես էթնիկապես, այնպես էլ դավանանքով: Ուստի, անտրամաբանական է, որ թերևս իր բնօրրանում ծնված կարծեցյալ քուրդ Զաքարիան ոչ միայն կրոնով, այլև էթնիկապես հայանար այդքան կարճ ժամկետում: Զաքարյանների՝ նման կայուն էթնիկ նկարագիրը վկայում է նաև նրանց հիշատակող՝ մեզ հասած հայերեն հնագույն գրչագիր աղբյուրը՝ Հռոմկլայում 1204թ. գրված ձեռագրի հիշատակարանը: Զաքարե ու Իվանե եղբայրների գործունեությանը քաջածանոթ նրա հեղինակը հպարտությամբ է նշում վրացական թագավորության սյուները հանդիսացող եղբայրների ոչ միայն սխրանքները, այլև՝ հայասեռությունը[90]: Դա է շեշտվում («որ էին ազգաւ Հայք»)[91] նաև Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությանը կցված պատմագրական բնույթի հիշատակարանում: Եթե, իրոք, դրա հեղինակը Վարդան վարդապետն է[92], ապա նա ևս հավատ չի ընծայել սկզբնաղբյուրի

---

[89] Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն, Զաքարյանների ծագումը, էջ 169-172:

[90] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 93: Հիշատակարանի գրիչը ծանոթ է անգամ Զաքարեի՝ շահնշահ պատվանմանը և Իվանեի դավանափոխությանը:

[91] Տեառն Մ ի խ ա յ է լ ի պատրիարքի Ա ս ո ր ւ ո յ ժամանակագրութիւն, Երուսաղէմ, 1870, էջ 526:

[92] Փ. Փ. Ա ն թ ա պ յ ա ն, նշվ. աշխ., գիրք Բ, Ե., 1989, էջ 91:

միջոցով իրեն մատուցված՝ Զաքարյանների քրդական ծագման վարկածին: Ինչ վերաբերում է Զաքարյաններին, ապա նրանք իրենց էթնիկ պատկանելության, այսինքն՝ հայազգիության, հարցում որևէ բարդույթ չեն ունեցել: Դրա հետ մեկտեղ, Հյուսիսային Հայաստան գաղթելուց հետո պատմական ասպարեզ մտնելով իբրև բոլոր միջոցներով բարձրացման ձգտող ֆեոդալական միջին խավի տոհմ և պանծալի անցյալ չունենալով, այն փառաբանող պատմագրական երկի անհրաժեշտությունը չեն զգացել: Այսպիսով, Զաքարյանները հայ իրականության ծնունդ էին ոչ միայն դժվար գերագնահատելի հայանպաստ գործունեությամբ, այլև՝ ծագմամբ[3].

ГЕНЕАЛОГИЯ ЗАКАРЯНОВ

А.И.ШАХНАЗАРЯН

Резюме

Вопрос генеалогии княжеского рода Закарянов, сыгравший важную роль в истории Северной Армении и Грузинского царства второй половины XII – середины XIV вв. и на протяжении долгого времени находившийся в центре внимания исследователей, по сей день остается спорным.

Имеющиеся в научном обиходе источники о происхождении рода Закарянов предлагают два варианта: армянский и чужеродный (курдский и персидский). Сравнительный анализ прямых и косвенных источников доказывает, что род Закарянов по своему происхождению является армянским.

---

[3] *Զաքարյանների վրացական ծագման շուրջ եղած կարծիքները չքննարկեցինք, քանի որ դրանք նպատակադիր քննության արդյունք լինելով, գիտական արժեք չունեն: Ինչ վերաբերում է Օրբելյաններից կամ Պահլավունիներից նրանց սերված լինելու շուրջ արտահայտված կարծիքներին, ապա դրանք իսպառ հիմնազուրկ են:*